

– Այդպես ըստ էր ժամանակաւ քու նախահայրդ՝ Վարդան, բայց վերջն աւելի խոհեմութեամբ մտածելով՝ ազգին ու կրօնքին օգուտը վերադասեց, իւր յամառութիւնը թողեց եւ այսօր իւր անունը բոլոր Հայաստան կօրհնէ եւ կը փառաւորէ, վասնզի իւր ուրացութիւնը աւելի օգտակար եղաւ քրիստոնէութեան զէն ի ձեռին մեռնելով Զրիստոսի համար՝ քան թէ Հազկերտի դիմադրելով, մեռնէր ղերութեան մէջ Սազաստան:

– Ես ո՞վ եմ ինքզինքս Վարդաններու եւ Վահաններու հետ բաղդատելու համար, նոցայ համբաւը, օրինակը կրնային օգտակար լինիլ ազգին եւ եղան. իսկ ես երեկուան պատանի՝ անձանօթ ամենուն...

– Ոչ այդպես, որդեակ, մենք այս թշուառ վիճակին մէջ փորձառու եղանք իմացանք թէ ի՞նչ է գերութիւնը, երբ հայրենիք երթանք ոչ միայն պէտք է պատերազմինք՝ այլեւ օրինակաւ եւ խօսքով քարոզենք զինվիսլ եւ զինել, ցոյց տանք թէ ռամիկ եւ շինական ամենը պէտք է զին վին, եւ հետեւինք արաբաց օրինակին:

– Հիմա ո՞չ գիտէ թէ ինչ ունինք աշխարհքիս վրայ, ո՞չ գիտէ աւերմունք եւ յաւիշտակութիւն բան մը թողայ ծ եմ մեզ ժառանգութիւն:

– Այդպես երիտասարդ կը յուսահատի՞ս շուտով. գերութիւնը քու սրտիդ կորովն սպաննէ՞ց: Տղա՛յ, դու կարծես թէ ես աստից ելած օրս ձեռնունայն կ'երթամ հայրենիք, դու խօսք տուր երկչոտութիւնը թողուլ եւ ինձ հետեիլ եւ այնպէս կը մտնենք Հայաստան, որ հայոց նախարարը ամենքն ակնածութեամբ նային մեր վրայ:

– Չեմ դիտեր գաղտնիքդ եւ հետաքրքիր նաեւ չեմ իմանալու, միայն կը խնդրեմ քեզմէ, սիրելի մօրեղբայրս, որ զիս հանդարտ թողուս իմ խղճմտանքիս հետ...

– Դարձեալ այդ խղճահար յամառութեան մէջ պիտի փչացնէ՞ս իմ եւ քու կեանքդ ի վնաս հայրենեաց: Եւ աստից վերջ թո՛ղ զրուցեն թէ ուսմունքը, ընթերցմունքը մարդս կը կատարելայ գործեն...

– Ի՞նչ կ'ուզես զրուցէ, իսկ Զրիստոսի «Որ ուրացի զիս առաջի մարդկան՝ ուրացայց եւ ես զնայ առաջի Հօր իմոյ» խօսքը չեմ կրնար մոռնալ, որ կարծես կրակէ գիրերով աչքիս առջեւ կը փայլեն միշտ: